

ՀՆՁՍԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՆՈՐ ԾՐՋԱՆ

Յիրաւի, թիւրքական փտած, խաւար, վայրենի Արեւելքի միտքը բնաւ հանաք անելը չէ, երբ յարձակուում է եւրօպական քաղաքակրթութեան ամենափայլուն ներկայացուցչին՝ Անգլիայի վրայ: Սուլթանական կառավարութեան հաջող օրդանները, «Մալուժաթ» և «Սաբահ», իրանց միմի Մէնտօր են երեւակայում: Հօջա Վասրադինի փաթթոցը կապած իրանց թիւրքական ղուլուններին՝ նրանք Անգլիային խրատ են տալիս մահմետական Հնդկաստանի հետ «մարդասիրաբար» վարուելու, «խեղացի, ժողովրդասէր, քաղաքակրթութեան ընթացք ունենալու ղէպի նա», «սովամահ չանելու» նրան, «չը կոտորելու բնիկներին», «չը բռնաբարելու կիներին»... Եթէ մի քիչ էլ զինուես հայ ինքնակոչ «ղիւանագէտների» անձոռնի երեւակայութեամբ, ղիւանագէտներ, որոնք հիմա «թիւրքին սիրաշահելու» քաղաքականութեան քարոզիչներ են դարձել (և միշտ էլ իսկապէս այդ են եղել — փայլուն ղիմակի տակ), եթէ, ասում ենք, մի քիչ էլ այդ աղտոտ զառանցանքով ապականուես՝ ականայ կը կարծես, թէ «Մալուժաթը» ու «Սաբահը» միմի անշահասէր, արգարադատ ու իմաստուն ղուլիներ են, որ պահպանում են աշխարհիս խաղաղութիւնը և ջատագովում մարդկութեան իրաւունքն ու բարօրութիւնը: Եւ ո՞վ կը յանդգնէ ասել, թէ մորելի նման ջարդած հարիւր հազարաւոր հայերն այդ սուլթանական օրդանների թունաւոր լեզւի զոհերն են, որ հայկական արեան մէջ են թաթախուած դրանց փայտէ գրիչները՝ հակամարդկային ոճիրներ գործելու հրահրիչ կոչերով, որ սուլթանական նիզակների ծայրերին հայ մանուկներն են ցցւել փալասի կտորի նման, որ հայ մօր արգանդը սուլթանական դաշոյնն է խառնել և գաղտնի թաթով պատառ-պատառ եղած մսի գունդ դարձրել, որ հայ կոյսեր խեղդամահ են եղել իրանց անարգած պատւի համար մղած յուսահատական մաքառման ձիգերում, որ հայ հայրենասէրի մարմինն է ձօժւել կախաղանի թօկից և մէկ ամբողջ ժողովուրդ՝ անվերջ, կատաղի ջարդերից ու հալածանքներից՝ նոյն իսկ իր ընկած զաւակների ա-

ձիւնները գերեզմանների միջից հանւած ու անարգւած է տեսել...

«Երէկայ պատմութիւն, անարդար չափազանցութիւն», մրթմրթում են անամթ օրդանները: Այո՛, երէկայ, շատ մօտ երէկայ պատմութիւն, որ խեղդեցաւ սյուրայ արեան հեղեղով, որը քամեցիք յոյների մարմնից:

Որ Անգլիայի թաթերը մաքուր չեն Հնդկաստանում, մենք այդ գիտենք. բայց որ նրա ղլխին գայլի աւետարան կարդացող լինի սուլթանը, յիրաւի, դա անձոռնի մասխարութեան չափն էլ անցնում է... Բայց պարզ է, որ այդ մասխարութեան մէջ կայ մի լուրջ շեշտ, որը հայոց լեզւին է միայն յատկացւած ասելու: Այդ ծեր Եւրօպան, ծեր իր քաղաքակրթութեամբ, ծեր իր ղիպօմատական իմաստութեամբ, ծեր իր պատերազմական հանձարով, և դրա ղլխին՝ Անգլիան, վերջին երեք-չորս տարւայ ընթացքում, անընդհատ հասող արեան տիղմում էր խրւած, չը համարձակւելով քայքայող թիւրքիայի աւերակների մի քարին անգամ ղիպչել: Իսկ այսօր նա ծնրադրած սուլթանի խալիֆայական կուռքի առաջ, ամենաջերմեռանդ «թէմէլլահներ» է անում: Ա՛հ, որ պիտի դառնութեամբ իր վերաւոր սրտի մէջ՝ կարող էր հայը կապել այդ ծեր Եւրօպայի սնապարծ ղլխին թիւրքի արիւնաշաղախ ու ապականւած փաթթոցը...

Սպասելով այն րոպէին, երբ մեր փոխարէն պատմութիւնը կանի այդ, ասենք այն, որ, արդարեւ, քաղաքական ժամանակները տարօրինակ կերպով զարձալի են դարձել... նրանց համար, որոնք լալ չը գիտեն, անշուշտ... Սարդէք երեւակայել. պառաւ Մարդակերը, որ իրան կարծած մահմետականութեան նոր Մարգարէ, իջած... որտեղից որ կուղէք, բայց յամենայն դէպս ոչ իր մօր արգանդից, իր մոգական գաւազանն է շարժում ամբողջ Եւրօպայի վրայ, որը նրա զարկերի համեմատ սկսում է ցատկոտել, ինչպէս պառաւ խեղացնորը՝ առարկան բաղմութեան ծաղրի ու ծիծաղի: Այդ վեց մեծերը դեռ մէկ-երկու շաբաթ առաջ ուղում էին, — աշխարհս միամիտներով միայն բնակւած ենթադրելով երևի, — հաւատացնել ամենքին, թէ խաղաղութեան բանակցութիւններն արդէն վերջացած են և թէ թիւր-

քիան «ամեն կէտերում» համաձայնել է եւրօպական պետութիւնների հետ... Խեղճ Յունաստան. այդ բանակցութիւնների գործն էր նրա փետուրները մէկ-մէկ փետտել և հարազատ հողի հետ այնպէս վարել, ինչպէս անշունչ ընկած զիակի հետ... Ասե՛նք արդեօք... գանեցան Լաւրօպայում այնպիսի յանգուգն պաշտօնական լըրագիրներ էլ, որոնք երկչոտ ձայնով Հայկական խնդրի անունը տւին, այն մտքով, թէ բանակցութիւններից յետոյ՝ դա է հերթական գործը: Լըրեի մեռելների խոր քունն են ուզում օրօրել... Սակայն Բօսֆորի թեթևաթուիչ քամին շուտ փրչեց ու ցրեց այդ երազը, որ Լաւրօպայի գլխին դարձել է մզաւանջ. սուլթանը «նոր պահանջներ» է մէջ տեղ բերել, և հետեւե՛նք... բանակցութիւնները «խաղաղութեան մասին» նորից պէտք է ձգձգեն մէկ ամիս էլ, գուցէ երկու... Հէնց այդ է սուլթանի նպատակն էլ:

Այդ է քաղաքական ներկայ վիճակը: Լաւրաքականութիւնից — ինչպէս սովորաբար միշտ — անբաժան են կեղծաւորութիւնը, իտաբեայութիւնը, խարդախութիւնն ու վատութիւնը: Սակայն եթէ եւրօպական տէրութիւնները դրա հետ միասին հմուտ են քաղաքագիտութեան մէջ, թփուրքիան ընդհակառակը, տգէտ ու անկիրթ՝ միայն այդ միջոցներն ունի: Բայց այդ միջոցներով չէ, որ կարելի կը լինի փրկել մի զլուխ, որը դատապարտւած է մահաւան, փրկել մի տէրութիւն, որը միմիայն այդ միջոցներն է գործադրում միշտ, շարունակ, ամեն պարագայում օտար տէրութիւնների առջև, ունենալով մէկ ուրիշ զէնք իր երկրի ներսը — անասնականութիւնն ու վայրենութիւնը:

Այդօրինակ քաղաքականութեան դարն այլ ևս անցել է: «Ես էլ ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ մէկ այլ ևս անպէտք, այլ ևս աւելորդ դարձած գոյութեան պահպանման ճիգեր: Թփուրքիայի կըրօնական, աստուծապետական տէրութիւնը կարող էր տակաւին քաշքշել իր գոյութիւնը, երբ գեռ այդ կրօնական դրութիւնը պահպանւում էր զինւորական մեծ ուժով, որը պաշտպանում էր այդ տէրութեան երկրի սահմանները: Հէնց երբ որ, այս դարուս միջոցին, զինւորական ոյժին կից՝ քաղաքական աշխարհում զարգանալով՝ առաջնակարգ դեր ստացաւ քաղաքագիտութիւնը, թփուրքական տէրութիւնը, շնորհով իր տնտեսական յետամնաց դրութեան և իր աստուծապետական կառուցւածքին, անկարող եղաւ իւրացնել այդ նոր մեծ զէնքը: Ուրիշ, քաղաքակիրթ, երկիրներում ածող ռամկավարութիւնն (démocratie) իր դարբնոցում կռեց նաև նորանոր զօրաւոր գործիքներ — ընդհանուր քւէարկութիւն, կրօնի անխտրութիւն, մամուլի և այլն ազատութիւններ, — ու

րոնք թարմութեամբ, նոր եռանդով ու նոր ուժով օժտեցին նրանց ժողովրդներին և այդպիսով զօրացրին նրանց տէրութիւններին: Տնտեսապէս յետամնաց թփուրքիան շարունակեց մնալ իր նախկին դրութեան մէջ և միակ զինւորական զէնքով, որը սակայն գնալով ոչ թէ աւելի զօրանում էր, ինչպէս Ռուսաստանին, այլ ընդհակառակը, աւելի ու աւելի բթմանում էր, որով մինչև իսկ փոքրիկ Յունաստանին յաղթել անկարող եղաւ առանց գերմանական ռադմագէտների և Վիլհելմի նիւթական օգնութեան: Լաւրօպիայի այդ վիճակն աւելի կնճռուաւած է այսօր քան երբ և է՝ շնորհով երկրի ներքին նիւթական կատարեալ սնանկութեան, շնորհով տնտեսական ամեն ճիւղերի քայքայման ու խառնաշփոթութեան:

Ի հարկէ, Յունա-թփուրքական խաղաղութեան բանակցութիւնները շարունակ ձգւելով չէ, որ սուլթանը կարող կը լինի իրան փրկել անխուսափելի անկումից: Այդ ասիական խարդախ քաղաքականութիւնն այնչափ սպիտակ թելերով է հիւսւած, որ ամենքի աչքին է ընկնում: Լաւրեթի անցնելով այս կամ այն պետութեան վըրայ և կամ եւրօպական տէրութիւնների իրարու դէմ ունեցած նախանձի ու շահերի շնորհով, այսօր կարողանում է կուրծք կրծքի տալ մեծ տէրութիւնների հետ և սրանց միառժամանակ խաղացնել, — դա բնաւ ապացոյց չէ, որ նա կարող եղաւ կրկին նորոգել իր խախտա հիմքերը: Մեր զիւանագէտ ինքնակոչների անհասկացողութեան ու տխմարութեանն ենք թողնում մեր ժողովրդի մէջ այդպիսի վհատեցուցիչ սերմեր ցանելու դերը: Մենք ասում ենք, որ, ընդհակառակը, սուլթանական ըէժիմն անցել է մի նոր շրջան և նա այլ ևս անդառնալի կերպով քայքայւած է: Այսօր դա աւելի նկատելի է քան երբ է: Տկար, սնանկ, քանդւած՝ ներսը, գոռոզ սուլթանն իր երկրով այսօր մինչև իսկ իրաւունք էլ չունի իր աժանագին յաղթութեան արդիւնքից մի յարդ իսկ իւրացնել ինքնուրոյն կերպով: Թփուրքիան այլ ևս Լաւրօպայի ձեռքի տակ մի վասսալ, ստորադրւած իշխանութիւն է: «Նրա երկրի մինչև իսկ ներքին կարգերի — քաղաքական, վարչական, տնտեսական — կանոնաւորումն այլ ևս բոլորովին անցել է մեծ պետութիւնների իրաւասութեան տակ: Սուլթանըն այսօր աւելի քան երբ է տէրը չէ նոյն իսկ իր տան մէջ: Լաւ հէնց դրա համար է, որ եւրօպական տէրութիւններից իւրաքանչիւրն այժմ ջանք է անում ինքը դառնալ այդ տէրը: Այդ ազահութեան արդիւնքն այն է եղել մինչև օրս, որ զոհաբերւում են փոքրիկ ազգերը: Լաւ հէնց այդ մի կողմից սուլթանական ըէժիմն անկման և միւս կողմից՝ Թփուրքիային տիրող լինելու եւրօպական

ազահուլթեան միջև եղած հակասութիւնն է, որ ստեղծւեց մեր ազգի եղբրական վիճակը: Ճակատադրական կերպով ստիպւած մաքառելու սուլթանական ըէթիմի դէմ, որ իր անկումով սպառնում է մեզ էլ գահավիժել, մի կողմից, միւս կողմից մենք տեսանք մի եւրօպական քաղաքականութիւնը, որ մեզ նեցուկ չեղաւ մեր անհաւասար կուրի մէջ, կուիւ, սակայն, որից միայն կարող ենք սպասել մեր փրկութիւնը:

Վրուլթիւնն այդպէս լինելով, մտավախները, երկչոտները, կամ նրանք, որոնք հայրենասիրութիւնը նկատում են իբրեւ միայն մեծամոլութեան ծարաւը յագեցնող անթոյն խմիչք, որոնք ազգասիրութիւնը դարձրել են իրանց ձեռքին շահաւոր արհեստ, — դրանք ամենքը, դողալով ահաւոր խոչնդոտներից ու բազմազան դժւարութիւններից, սկսում են իրանց մտաւոր աղքատութեամբ ու բարոյական ապականութեամբ խոնարհութեան ու թերահաւատութեան ախտով վարակել հասարակութեանը, զուր ձիգ թափելով այդպիսով ազնիւ գործիչների ջանքերն էլ ի դերեւ հանել: Թշուառակներ. հապա ռոտեղից նրանք հասկանան, որ ամեն խոչնդոտներ ու դժւարութիւններ կարող են յաղթահարւել միայն եռանդուն անձնւորութեամբ և անխախտ հաւատով դէպի գործը:

Բնդհանապէս, մեր դրութիւնն այսօր շատ որոշ է: Մենք գիտենք, թէ ինչ վհի գլխին է կախւած սուլթանական ըէթիմը. մենք գիտենք նոյնպէս, որ եւրօպական տէրութիւնների անորոշ ու անհամարձակ դիրքն էլ կը խախտէ, եթէ թիւրքական կայսրութեան մէջ ներսից սուլթանական ըէթիմը ստանայ ուժգին հարւած: Մեր պատմական դատն էլ հէնց դրանում կարող է գտնել իր միակ լուծումը: Հետեւաբար, պատմական անխուսափելի պահանջ է, որ ներկայ կրիտիկական ու ծանր ժամանակներին էլ մենք շարունակենք մեր կռիւը, չը մնանք սարսափահար կանգնած ճանապարհի կէսին: Հէնց հիմականից սկսած, այսուհետեւ է, որ աւելի յարատեւ ու տոկուն յեղափոխական գործունէութիւն պէտք է ցոյց տանք: Հէնց հիմականից սկսած, այսուհետեւ է, որ պէտք է ցոյց տանք մեր սէրը դէպի ժողովրդային ընդհանրութիւնը և մեր հմտութիւնը նրա փրկութեան գործն առաջ տանելու մէջ: Հատ գործ կայ անելիք: Մեր ջանքն այսօր պէտք է լինի՝ մեր մոլորում լաւ գծադրել ու որոշել, թէ որոնք են այդ գործերը և երբ, ինչպէս ու ինչ եղանակներով պէտք է նրանք ի կատար ածել:

Հայկական դատի փայլուն օրերը դեռ առաջիկայումն են: Այժմ նա անցել է միայն մի նոր շրջան, աւելի կնձռոտ, բայց և աւելի հա-

սուն: Վիտենսներ աշխատել — և յաղթանակը մերը կը լինի:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ն Կ Ի Լ Ի Կ Ի Ա Յ Ի Ց

2. Խ. 20 Յուլիս 97.

Մինչդեռ կառավարութիւնը քիչ առաջ բարեկարգութիւններ մտցնելու պատրուակի տակ կը յայտարարէր հասարակութեան, թէ «անցեալէ բոլոր դէպքերը պէտք է մոռացուին և ինք այլ ևս չը պիտի զբաղուի ադոնցով», կուսակալի մեկնած օրն իսկ տեղական կառավարութիւնը ուղեց ձերբակալել Օճագլըցի Պոսմաճեան և Վահան Զօռուգ անուն անձերը, իբրեւ ոճրագործներ, որոնք ամբաստանուած են այն յանցանքով, որ 95-ի վերջերը, ընդհանուր սարսափների միջոցին դիմադրած են իրենց գիւղի վրայ յարձակող թիւրք խուժանին և կուրի մէջ իբր թէ սպանած են մի թիւրք: Ինչպէս պարզ է, միայն թիւրքերի ի գործ դրած անհամար ոճիրները, սպանութիւնները, հարստահարութիւնները պէտք է մոռացուին. իսկ, ընդհանապէս, մեր կեանքը ոչնչացնելու, մեր պատիւը բռնաբարելու և մեր ինչքը յափշտակելու համար մեր վրայ արշաւող տասնեակ հազարաւոր պաշիպօղուգ խուժանի դէմ ինքնապաշտպանութիւն ընելը ամենամեծ ոճիրն է և արժանի պատժուելու...

Այսօր մէջ ոստիկանները գողացած էին վերջերս որոշուած մի հայ ոստիկանի վուշէ և ծըր հրացանը: Հայը տեղական կառավարութեան շատ անգամ բողոքել է և անարգուելէ յետոյ՝ այս անգամ բողոքեց կուսակալին, երբ սա եկած էր այդ կողմերը: Կուսակալը թիւրք ոստիկաններէն մէկի հրացանը առնելով կը յանձնէ հայ ոստիկանին: Սակայն այս դէպքէ մի քանի օր վերջ, երբ հայը կառավարական գործերի համար շրջակայ գիւղերը կը ձամբուի, իր պաշտօնակից թիւրք ոստիկանները նախապէս կը կտրեն ճանապարհի անցքը և սպաննելու նպատակով կը հալածեն. գնդակներ կը թափեն հայի ետեւէն, թակայն վերջինս փախչելով հազիւ կազատէ իր կեանքը: Հայ ոստիկանը համոզուած լինելով, թէ մի օր կարող են ըսպաննել իրեն անպատճառ, թախուած կը թողու իր զգեստները և կը հեռանայ կառավարութեան շէմքէն:

Լօգէրլիցի Եռսուֆեան Սարգիս և Պօղոսեան Յովհաննէս անուն անձերը երեք գիւղերի աշարը գնած էին կառավարութենէն: Թիւրք գիւղացիները ամեն տեսակ չարիք հասցնելէ յետոյ՝ սաստիկ կը ծեծեն ըսելով թէ «կեամբուրլար աշար ալմագ Եագըշըր մը»: Հայերը ստիպուած ամսականով ոստիկան կը խնդրեն կառավարութենէն, որպէսզի կարող լինեն հաւաքել տասանորդը. այլապէս անկարելի է:

Ոչ նուազ վնասներ և չարիքներ կը հասցնեն պաշտպանութեան համար այստեղ հաստատուած կանոնաւոր զինւորները: Օր չը լինի, որ կով, եղ, ոչխար և այլն չը գողանան իրենց անօթի փորելը կշտացնելու համար: Անցեալ օրեր մի քանի զինւորներ կը մտնեն քէպապճը Խաչատուրի խանութը և կը պահանջեն որ և է մի բան: Հայը կը պատառխանէ, թէ ինք աղքատ է, ոչինչ չունի իրենց տալու և կը խնդրէ, որ դուրս գնան իր խանութէն: Զինւորները առանց մտիկ տալու հայ խանութպանի աղաչանքներուն, կատաղած կսկսեն

ապտակներ և կռուներ իջեցնել: Վերջինս անկարող լինելով տանել այդ աստիճանի անարգանքը, ուժեղ կերպով կը յարձակի զինուորներու վրայ և մի լաւ ծեծ տալով դուրս կը վռնտէ իր խանութէն: Բաւական էր արդէն, որ հայը յանդգնած էր իր պիղծ ձեռքը բարձրացնել սուլթանի հարազատ զինուորների վրայ և հարւածի դէմ հարւածով պատասխանել... Հայ երիտասարդը անմիջապէս փոխադրուեցաւ զօրանոցը՝ հազարապետի մօտ և իր յանդգնութիւնը, իր աններելի մեղքը քաւեց բանտարկութեամբ և բազմաթիւ դաւար ճիպոտներով...

Այս օրեր նորանոր տարածայնութիւններ շատ կան: Իբր թէ թրքական կառավարութիւնը պատերազմ պիտի ունենայ ուրիշ, աւելի զօրաւոր մի պետութեան դէմ. խիստ հապճեպով թէ բէտիֆ և թէ մուսթա-հաֆըզ զինուորները կը հաւաքուեն, մինչև իսկ պետք է հիւճրէները (գպրոցները) փակեն և մօլլաներն ու խօճաները զինուորութեան գնան՝ յանուն Մուհամմէտի: Շրջակայ թիւրքերը մերժեցին զօրք տալ. ճամիւների, հիւճրէների և կառավարական պալատի մէջ ամեն օր գաղտնի ժողովներ տեղի կունենան: Մի քանի հայասէր թիւրքեր խորհուրդ կը տան, թէ այս օրեր արթուն և զգուշաւոր լինեն... Սոյնանման լուրեր կը հասնին նաև Նիկիայի զանազան վայրերէն. ահա ու սարսափը ամենուրեք է. առևտուր, հաղորդակցութիւն ևն. դադարած են. հայ քաղաքացու և գիւղացու տնտեսապէս նեղ գրութիւնը անկարագրելի է:

ՄԱՍՏԱՌՅԻ.

ՆԱՄԱԿ ԲԵՅՐՈՒԹԻՑ

26 Յուլիս, 1897,

Վ. Պօլսի ոստիկանութեան նախորդ նախարար Նազիմ փաշան, երբ որ վալիի պաշտօնով այստեղ հասաւ, այդ օրէն սխեւալ Բէյրութի մէջ եղող քրիստոնեայ տարրն իր հանգիստը կորսնցուց և շփոթութենն ու երկիւղը տարածուեցաւ ժողովրդի մէջ:

Վերջինս համախմբուեցաւ այստեղ լրտեսների և մատնիչների ստուար խմբակը, որը կազմուած է նոյն արիւնարբու և գաղան Նազըմի հրամանով: Ասոնցմէ ոչ-պակաս զգուշի և փնտաւար դերի մէջ կը գտնուին հայ ժողովրդի կողմէ մերժուած և սուլթանի վաւերացուցած Սի կաթողիկոսն և իր ազգական Լեոն Սիսլիանը, որոնք Նազըմի աջակցութեամբ ու խորհրդով ամեն տեսակ ստորութիւններ ու դաւաճանութիւններ կը գործադրեն: Նիկիայի ժողովրդի ատելութիւնն ու զայրոյթը անկարագրելի է այդ վատերի դէմ: Վ. Պօլսի լրտեսական գրութիւնը նոյն խստութեամբ փոխադրուած լինելով Բէյրութ՝ ամեն անկիւն, ամեն փողոց լին ևն խափանելով ու փոխանելով, ամենաոչինչ պատրուակով կը ձերբակալեն քրիստոնեաները և խոնաւ ու վատաւոր ընտրուած մէջ ամեն տեսակ նեղութիւններ կը հասցնեն: Այս ամեն նորութիւնները տեղի կունենան այս վերջին ամիսները՝ Նազըմի գալուստէն անմիջապէս յետոյ:

Տեղացի հայերու վիճակը աստիկ ծանրացաւ, առանց պատճառի մի քանի օր առաջ բանտարկեցին Յարութիւն Գալուստեան, Վարապետ Թադուրեան և Պաղտատար Զրաքեան անուն անձնաւորութիւնները, և մի քանի օր բանտի մէջ պա-

հելով, միմիայն կաշառքի շնորհով, դարձեալ ազատ արձակեցին: Մարգասպան Նազիմը և իր գործակից երկու դաւաճանները որոշել են Բէյրութի մէջ ոչ մի հայ չը թողնել: Այս շաբաթ, կառավարութեան մասնաւոր կարգադրութեամբ, շոգենաւով եկող պանտուխ հայերը արգիլուեցան ցամաք ելլել և յայտարարուեցաւ պաշտօնեաների կողմէ, որ տեղացի հայերը հեռանան Բէյրութէն: Եթէ երբէք հայերի կողմէ պատահի կռիւ կամ մի որ և է աննշան դէպք, անմիջապէս բռնի կառաջնորդուին և ամեն կերպ նեղութիւններ ու նախադիմումներ կը տրուին: Սէր-գոմիսերի առաջին խօսքը կը լինի, թէ յիւսկուրներ, ձեզ պետք է միայն աքսորի բերդերը ուղարկել կամ բնաջնջ ընել, դուք պատճառ եղաք օսմանեան կայսրութեան անկման և ներկայ անմիջապէս վիճակին:

Նազիմ փաշան Բէյրութ գալէ առաջ, Պօլսէն ուղղակի Երուսղէմ մեկնած էր: Այս առթիւ այլ և այլ տարածայնութիւններ կը պատմուին: Ոմանց ասելով իբր թէ նա գացել է այնտեղ հայերի և Յոյների մէջ տեղի ունեցած կռիւները կարգադրելու համար, իսկ ոմանք ալ (Նազըմի մօտ և հեռու բարեկամներ) կըսեն, թէ Նազըմը զղջալով իր արած այնքան անբը-թութիւնների և թափած անմեղ արիւնների վրայ և երկնքի բարկութենէն երկիւղ կրելով, երուսղէմ գնացեր է քրիստոսին աղաչելու իր մեղքերի քաւու-թեան համար: Այժմ, որպէս թէ, գաղտնի քրիստոնեայ է մնացած: Այս լուրերը կը տարածուին Նազըմի գլխուն հայերու կուտակուող զայրութիւնը մեղմացնելու նպատակաւ:

ԿԱՅԾԱԿ.

ՆԱՄԱԿ ՎԱՆԻՑ.

15 Յունիս 97.

Սոյն նամակով «Հնչակին» կը հաղորդենք Վուսակցութեանս վանի եռանդուն գործիչներէն Գրիգոր Շահբազեանի ցաւալի մահուան լուրը: Սոյն Հնչակեան գործիչը պատերազմի դաշտի վրայ չընկաւ, սակայն իր վերջին 5-6 տարւայ անխնայ գործունէութեամբ մեծամեծ ծառայութիւններ մատուց Վանի յաղափոխական շարժումների մէջ: Իր բանտարկութենէ և անմուռանալի Մարտիկի հետ միասին 85 կտրիճներէ բաղկացած մեծ խմբի հերոսական կոտորածէն յետոյ խոր թախծի մէջ ընկաւ և այդ կսկիծով հետզհետէ տկարանալով զոհ գնաց անգութ մահուան:

Գրիգոր Շահբազեանը բնիկ վանեցի էր և քաղաքամէջի բնակիչներէն: Գեռ իր մանկութեան ժամանակը նա մատնացոյց կը լինէր իր ընկերակիցների մէջ իր ընդունակութիւններով, բացառիկ ճարպիկութեամբ և խելացիութեամբ: 1888-ին իր անձնական գործերով Պօլիս մեկնեցաւ, ուր երկու տարի վերջ յարաբերութիւն և գործակցութիւն ունեցաւ սուլթանի մայրաքաղաքի մէջ գործող Հնչակեանների հետ: Քիչ ատենէն նշանաւոր հանդիսացաւ և համակրելի դարձաւ այդ շրջանակի մէջ իր մատուցած բազմաթիւ ծառայութիւններով յաղափոխական ասպարէզի վրայ: 90-ի Գուլ-Գաբուլի ցոյցի միջոցին նա իր ամբողջ ոյժերով աջակից եղաւ Հնչակեան գործիչներին, ցոյցի կազմակերպութեան մէջ: Գոյցէն յետոյ նա իր ընկերների որոշումով իր-հայրենիքը՝ Վան վերադարձաւ, այնտեղ

կազմակերպելու և գործելու նպատակով: Այդ ժամանակ վանի մէջ նոր կախէր Հնչակեան խօսքը և կազմակերպութիւնը: Թէ կառավարական և թէ այլ և այլ գծուարութիւններ բազմաթիւ էին Հաջազեանի առաջ, սակայն նա, առանց վհատուելու, երկաթէ կամքով մարտնչելով այդ ամեն խոչնդոտների և անյարմարութիւնների հետ, աշողեցաւ վանի նոր երիտասարդութեան համակրութիւնը գրաւել և ընդունակ անձնուէր ոյժեր հաւաքել իր շուրջը, նուիրած ժողովրդական մեծ գործին: Նա առաջինը եղաւ, որ մտած ժողովրդի այլ և այլ խաւերի և մասնաւորապէս տեղական երիտասարդութեան շրջանի մէջ, պարզեց, բացատրեց կայսրութեան ծանրութիւնը, թիւրք կառավարութեան վնասակար և ոչնչացնող ընթացքը, յեղափոխական գործի նպատակն ու միջոցները և ժողովրդի ճշմարիտ ազատութեան սկզբունքները: Նա առաջինն եղաւ, որ վանի մէջ կազմեց Հնչակեան խմբեր և կազմակերպեց վասպուրականի Հնչակեան Մասնաճիւղը՝ ընդարձակելով իր գործունէութիւնը՝ սմբողջ նահանգի մէջ: Ահա այսպէս եղաւ Հաջազեանի անմուռ և անխախտ և արդիւնաւոր դերը վանի յեղափոխական պատմութեան մէջ Հնչակեան կուսակցութեան նկատմամբ: Քաղցրայիշատակ Մարտիկի վասպուրական մտած ժամանակ և այնտեղ գործած միջոցին Հաջազեանը անձնուէր և քրտնաթոր ջանքերով ամեն տեսակ դիւրութիւններ ու աջակցութիւնը չը խնայեց: Հաջազեանը Մարտիկի ամենամօտ, ամենաանկեղծ և անբաժան ընկերն ու օգնականը եղաւ նոյն իսկ ամենավտանգաւոր պարագաների մէջ:

Սակայն աւաղ, քաջարի Մարտիկի և իր մեծ խմբի դիւցազնական մահուանէ վերջ, երբ աւելի ևս պէտք ունէինք Հաջազեանի կեանքին ու գործունէութեանը մի ծանր հիւանդութիւն այն խլեց և բաժանեց 1896-ի սեպտեմբեր 10-ին՝ թողնելով մեծ յիշատակ վանի երիտասարդութեան մէջ՝ իբրեւ մէկ անձնուէր և փորձառու գործիչ: Հաջազեանը մեռաւ 35 տարեկան հասակի մէջ՝ վշտահար, միշտ տխուր իր պատրաստած այդ կարեւոր ոյժի և գեղեցիկ խմբի կորստեան պատճառով: Մեռաւ Հաջազեան՝ հակառակ իր առողջ, երկաթէ կազմաւածքի՝ խոր սուգի մէջ թողնելով իրեն անկեղծապէս սիրող ու յարգող ընկերները և գթալի մայրը: Նա մեռաւ ճիշդ 61 օր վերջ իր յանկարծակի ձերբակալութենէն՝ վանի դահլիճ Հաշիմ պէյի միջոցով, ինչ ատեն մի քանի օրւայ մէջ ազատուեցաւ իր խելացի հարցաքննութեան և հաստատամտութեան շնորհով:

Նա մեռաւ, սակայն, իր յիշատակը կենդանի է սմբողջ վասպուրականի և իր ընկերների մէջ և իր օգտակարութիւնն ու գործունէութիւնը անմոռանալի Հայկ. Յեղ. պատմութեան մէջ:

ՄԻՐԱԶ.

ԲՂ... 15 Յուլիս 97.

Տեղեկութիւնները խիստ շփոթ կը նկարագրեն Պարսկաստանի ներկայ վիճակը: Գալթէժ դարձեալ նորանոր խռովութիւններ պատահած են և մի հայ ըսպանուած: Քերմանշահի և ամբողջ պարսկական քիւրտիսդանի մէջ հասարակութիւնը գրգռուած է սիւնի ազանդաւորների և մանաւանդ Օսմանցիների դէմ: Բաղդադի մի հարուստ և ականաւոր վաճառական ցերեկ

ատեն դաշոյնով խողտողեցին պանդոկի մէջ: Յեղոյն օսմանեան հիւպատոսը փախած է այդտեղէն: Պարսկաստանն ալ շարժեցաւ:

Այս շաբաթ Կ. Պօլսէն հասած լրագիրներէն ումանք գոհունակութեամբ կաւետէին, Լօնդօն հրատարակող «l'Arménie» թերթը փոխելով իր ուղղութիւնը ու ընթացքը, սկսած է քարոզել թէ հայ ժողովուրդը հանգիստ և անգործութիւն կարող է դըտնել միմիայն Օսմանեան յաւիտենական կայսրութեան բարձր հովանոյն տակ... Իրենք զիրենք դիւանագէտ հռչակած Չերաղները ազգին մեծ օգուտ մը բրած կը լինէին, էթէ շատոնց դուրս տային իրենց իսկական գոյնը:

*

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՅ.

10 Օգոստոս 1897,

Վերջերս Կ. Պօլսի մէջ խտութիւնները կը սաստկանան և բազմաթիւ ձերբակալութիւններ կը լինին անխտիր, թէ հայ և թէ թիւրք ժողովրդներէն: Սուլթանի հրամանները խիստ են մայրաքաղաքի մէջ խաղաղութիւնը պահպանելու և նորանոր յուզումների ու դէպքերի տեղի չը տալու համար: Բազմաթիւ բարձրաստիճան թիւրք պաշտօնեաներ, դպրոցականներ և ամեն դասակարգի յայտնի մարդիկ, իբր թիւրք յեղափոխականներ հետզհետէ կուղարկուին բանտերը, ուր կը մատնեն ամենաանօրինակ տանջանքների ու ծեծի:

Համարիէ զօրագունները, որոնք Կ. Պօլսէն իրենց վայրերը ուղարկուած էին, վերջերս իրենց հրամանատարներէն մի քանիսը դարձեալ Պօլսի փողոցները տեսնուած են. դանազան մեկնութիւններ ու տարածայնութիւններ կան ասոնց վերադարձի նկատմամբ: Ստոյգ աղբիւրներէ կը հաւաստեն, թէ Տրապիզոնէն Կարին մեծաքանակ զէնք, ռազմաթիւրք և պաշար կը տեղափոխուի: Չորրորդ բանակին հրաման է տրուած անմիջապէս միանալ Կարս-Գաբուի բանակի հետ, ուր տեղ զօրահանգէս պիտի կատարուի: Համար աղան մեծամեծ պատերազմական պատրաստութիւններ կը տեսնէ եւրօպական և ասիական սահմանագլխների վրայ, յոյսեր տածելով, որ կիսաթիւրք Վիլհելմի աջակցութեամբ փառաւոր յաղթութիւններ պիտի տանէ Պալկանեան փոքր իշխանութիւնների և ուսական պետութեան դէմ, ինչպէս այդ արաւ Յունաստանին: Եւ արդէն այս նպատակով ընդհանուր իսլամութեան հրաւեր կը կարգայ, որ յանուն Մուհամմէդի իրեն հետ միանան՝ անհաւատ պետութիւնների դէմ Գուրանի կըռուր մղելու համար:

Պալկանեաններէն և մասնաւորապէս Կեսարիայէն հասած լուրերը շատ տխուր են, իբր թէ թիւրք խուժանը դարձեալ գրգռուած նորանոր կոտորածների պատրաստութիւններ կը տեսնէ:

*

Նիկոմիդիոյ գաւառն ևս չը նայած, որ Պօլսի այնքան մօտ է, տխուր վիճակի մէջ կը գտնուի. ժողովուրդը առհասարակ լարուած է և նորանոր դէպքեր, ըսպանութիւններ միշտ անպակաս են: Մի քանի շաբաթ առաջ անապաղարցի Անդրանիկ Մալաճեան անունով 32 տարեկան մի երիտասարդ Ատաբազարէն ճանապարհ կընկնի չորս ժամ հեռաւորութեամբ Քընտրզը գիւղը գալու համար: Ճանապարհին Տաշլըք

կոչուած ձորի մէջ թիւրք աւազակները երիտասարդի առաջը կը կտրեն և ամենասոսկալի անդթուլութեամբ կը խողխողեն անոր մարմինը: Նախապէս աչքերը կը հանեն, և յետոյ թևերը, ականները, սրունքները, վերջապէս ամբողջ դիակը բազմաթիւ կտորների կը բաժնեն Գուրանի զաւակների յատուկ տրամադրութեամբ: Հայերը եղելութիւնը հաղորդեցին կառավարութեան և պահանջեցին ոճրագործների պատժուիլը: Ատաբազարի ոստիկանութիւնը յայտնի գումար ստացած մեկնեցաւ դիակը փնտռելու համար: Սակայն իբր թէ անկարող լինելով գտնել երբ յետ կը վերադառնար, ոստիկանների հետ միասին գնացող տանի չափ հայ երիտասարդներ դիակը գտան և յանձնեցին իրենց: Սայլ մէջ դրած քաղաք բերին անմեղ զոհի չաջաչար կերպով յոշոտուած դիակը, որի համար ժողովուրդը տխրութեան ու սուգի մէջ էր:

Սոյն սպանութեան մէջ տեղական կառավարութեան մասնակցութիւնը կար: Վերջին ժամանակներս յատուկ կարգադրութիւն էր եղած կառավարութեան կողմէ, որ տեղացի յայտնի հայ երիտասարդներ պարտաւոր էին ամեն առաւօտ կառավարութեան մի տոմարի մէջ ստորագրել իրենց անունները՝ իրենց ներկայութիւնը հաստատելու համար: Այդ պարտականութիւնն կատարելու համար իր սպանութեան առաւօտը Մալաճեանը ներկայացած էր և ստորագրելէ յետոյ փոխին յայտնած էր, թէ այդ օրը անձնական գործով ֆրնտըզը մեկնելու է: Դէպքը կառավարութեան իմաց տրուելէ յետոյ ոստիկանութիւնը շատ անհոգ և դանդաղ գտնուեցաւ՝ թէ քննութեան և թէ ոճրագործների ձերբակալութեան խնդրի մէջ: Սակայն այսօրինակ դէպքեր և կառավարութեան մեքենայութիւններ այլ ևս ողորական են դարձեր հայերու համար...

*

Անցեալ օրեր ևս Վէյլէն երեք ժամ հառաւորութեամբ Գնձլար կոչուած հայաբնակ գիւղէն երկու երիտասարդներ անհետացած էին, որոնց դիակները քիչ յետոյ չարաչար կերպով սպանուած գտնուեցան:

Առաջինը Պօղոս Մարգարեան անուն 24 տարեկան մի երիտասարդ էր, որը առևտրական գործով մօտակայ մի թրքական գիւղ էր գնացած: Թիւրքերը իմանալով, որ ասոր մօտը բաւական դրամ կայ, գիւղէն դուրս տարած են և զէնքերով ու քարերով ըսպաննած: Միւսը Յովհաննէս անունով մի երիտասարդ է, որը դարձեալ իր անձնական գործերով շրջակայ գիւղերը ճամբորդած ժամանակ, ճանապարհին վրայ, թիւրքերի ձեռքով նոյնպիսի անդթուլութեամբ կը խեղդուի: Կառավարութեան բողոքեցին, սակայն հարկերապետը անտարբերութիւն ցոյց տալով, հայերին վերադրած է այդ դէպքը: Այս ամենի հանդէպ բնականաբար հայ ժողովուրդը միշտ վտանգուած տեսնելով իր կացութիւնը, անկարող կը լինի իր քաղաքէն, գիւղէն, կամ տնէն դուրս ելնելու: Երկու տարի է ի վեր Վէյլէի Ագ-հիսար կոչուած գիւղի կոտորածի հեղեմակներէն մի քանի թիւրք սրիկաներ բանտարկուած էին, սակայն վերջերս վեհափառ սուլթան Համիտի երման արժանանալով և միանգամայն իբր սուլթանական վարձատրութիւն իրենց ոճրագործութիւններին, Ագ-հիսարի մէջ ոստիկան զինուորներ են կարգուած ժողովրդի պահպանութեան համար...

ԱՍՏԱՌ.

ՆԱՄԱԿ ԼԻՃՔ ԳԻՒՂԻՑ.

5 Յուլիս, 1897

Ահնայ Լիճք գիւղը և շրջակաները գտնուած հայկական գիւղերու կացութիւնը անտանելի էր այս ձեռնուայ մէջ: Տներէն մեծ մասը այրուած էր և առհասարակ թալանուած ու քանդուած էին. ամբողջ գիւղերը, շնորհով մահմետական ֆանատիկոսութեան, կը ներկայացնէին աւերակներու կոյտեր, ուրտեղ երբեմն, բեղմնաւոր կեանքը գոյութիւն ունէր և հազարաւոր հայ աշխատասէր գիւղացու ձեռքերը կը գործէին ու կը կենդանացնէին: Մերկութիւնը, թշուառութիւնն ու անօթութիւնը սոսկալի կերպով կը ծանրանար, թրքական սարսափներէն ու կարմիր օրերէ յետոյ, Հայ ընտանիքների վրայ, որոնք այդ ատեն համարեա նոր կը տեսնէին և նոր կզգային իրենց դժբաղդ վիճակի տխուր իրականութիւնը:

Գարնան գալուստը մեղ համար եղաւ մի անփութարինելի բարիք. ժողովուրդը կարող կը լինէր իր օրական սնունդը հայթայթել զաշտերէն ու լեռներէն հաւաքած զանազան բանջարեղէններով ու բոյսերով: Գարնան առաջին և երկրորդ ամիսներու մէջ ժրաջան հայ մշակը մոռացած իր արիւնալից օրերը, իր սև թրշուառութիւնը, մտածեց իր արտերու և վարուցանի մասին, վազեց դէպի գութանը և դէպի երկրագործութիւնը, որպէսզի առաջիկայ ժամին կարող լինի իր գոյութիւնը պահպանել, իր ընտանիքի ու զաւակներու համար ամբողջ տարւայ կերակուրը պատրաստել: Սակայն դժուարութիւնը այն էր, որ նա չունէր ոչ աշխատաւոր եղբ, ոչ գործիքներ և ոչ ալ ցանելու համար սերմ. ամբողջ ամբարները յափշտակուած էին մահմետական խուժանի կողմէ:

Տեղացի թիւրքերը, որոնք միանգամով հարուստներ դարձան հայ ժողովրդի երկար տարիներու աշխատութեամբ ու աղի քրտինքի շնորհով, ջանացին օգտուել հայերու ներկայ դրութեանէն ալ: Առաջարկեցին հայ գիւղացիներու, որ մեր արտերը իրենց ցորենները ցանենք, աշխատանքին ալ իրենք մասնակցութիւն ունենան, իսկ արտագրութիւնը հաւասար բաժանենք մեր ու իրենց մէջ: Երկու կողմէ ընդունուեցան պայմանները: Սակայն այժմ, որ կալի ատենն է, որ ամեն աշխատութիւն վերջացած է և հարկաւոր է միմիայն արդիւնքը ձեռք բերել, թիւրքերը սպաննացան խեղճ հայ գիւղացիներու և արգիլեցին մեզ նոյն իսկ կալերը ոտք գնել... Գիւղացիները դիմեցին Ահնայ կառավարութեան և պահանջեցին իրենց իրաւունքների պաշտպանութիւն, սակայն իրենց բողոքները քննարկեցին անարձագանք և արհամարհուած վնասուեցան սուլթանի դաւանած ուղղութեան հաւատարիմ պաշտօնեաներու կողմէ: Հայերը յետոյ բազմաթիւ ստորագրութեամբ դիմեցին Աղդ. Պատրիարքարան և խնդրեցին օգնութիւն ու պաշտպանութիւն իրենց աշխատանքի ու արդար իրաւունքի ստացման համար, սակայն մինչև այժմ ոչ մի արձակցութիւն, ոչ մի նպաստաւոր շարժում պատրիարքարանի կողմէ: Պատրիարքարանը անգիտակ եղած դէպի ազգային շահերը, ժխտած իր բարոյական պարտաւորութիւնները, կուրացած հայ ժողովրդի և հայ գիւղացու եմթարկուած ամենատխուր իրականութեան ի տես, կը բաւականանայ ոճրագործ արիւնարբու Համիտի ոտքերը լղել և յանուն ամբողջ ժողովրդի երախտագիտական ուղերձներ ստո-

րագրել... Բայց, յիրաւի, ինչ կարելի է սպասել մի ապահանգութեամբ, նեխուած միջոցառումէ, մի անշահ, խորթ, օտարացած Մարմնէ, ինչպիսին է Պոլսական Պատրիարքարանը: Գարնրէ ի վեր նա հաւատարիմ է մնացել իր սուլթաններին և միակ միջոցն է եղել հայ ժողովուրդը ճնշելու, ստրկացնելու, թշուառացունելու ամենատեսուր սակայն անժխտելի դերի մէջ...

ՅՈՒՐՈՒՐ.

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ԹԻՒՐԿԻԱ.

ԽՈՒՆԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԱՆԹԻՆՆԵՐ.

Խաղաղութեան բանակցութիւնները շարունակուած են սուլթանների Մայրաքաղաքում: Գեսպաններն, իրանց Պետութիւններից ընդունած հրահանգի համաձայն, խորհրդակցում են Հելլենական Փիւսնսք եւրօպական հսկողութեան ներքեւ առնել, որը առաջարկուած է գերմանական կայսեր կողմից: Գեսպանները ներկայացրին թէվֆիդ փաշային մի նոր խնդիր նշանակելու միջոցն ու ժամանակը թրքական զինւորները թէսալիայից դատարկելու համար: Թիւրք փաշան առաջարկել է զանազան փոփոխութիւններ ընդհանուր պայմանների նկատմամբ, որոնք, առհասարակ, անընդունելի են նկատուած և մասնաւորապէս այն կէտը, որը կապիդիւլասիօնի և թէսալիայից ետ քաշելու խնդրին է վերաբերում: Գեսպանները մերժեցին ընդունել որ և է հիմնական բարեփոխութիւն: Պետութիւնները, իբր, ցանկանում են վերադարձնել թէսալիան Յունաստանին, չուտ, ինչքան այդ հնարաւոր լինի:

Յոյն կառավարութիւնն աշխատում է միջոցներ պատրաստել հատուցանելու համար պատերազմական տուգանքի առաջին վճարումը:

Թէսալիայում կալարիթէսի առջև կռիւներ է պատահել թիւրք զինւորների և յոյն գիւղացիների մէջ: Զօրքերը մեծ կորստով յետ են քաշուած:

Թիւրքերը 600 ոսկի զինւորական տուրք են նշանակած Վլոյի վրայ, 250 ոսկի Մարքիսիայի և համեմատական գումարներ ուրիշ գաւառների վրայ: 1500 փախստականներ կան էդիպոստում, որոնք շատ թըշուառ դրութեան մէջ են:

Արէսէն անիշխանական վիճակ ունի. յայտնի է, թէ ո՞վ է կղզիի տէրը: Թիւրք կառավարութիւնը անկարող լինելով իր նաւատորմիցը մտցնել Արէսէական ջրերը՝ ծովակալների ներկայութեան պատճառով, վերտադիր է ուղարկել Սիւրի, մի փոքր կղզի Միդիլլինի մօտ:

Վանից մի հեռագիր Բ. Դրան հաղորդում է, թէ մի քանի հազար հայ ագիտատուներ Պարսկական սահմանագլխից ներս են անցել, և յարձակել Մէզքիքի քիւրդ ցեղի վրայ և սպանել են մօտ երկու հարիւր հոգի, որոնց մէջ էին կիներ և երախաներ: Սպանուած է նաեւ ցեղի գլխաւոր կինը չարաչար մահով և զոհերից շատերի քիթն ու ականջները կտրուած են: Վերջը հասան ուրիշ հեռագիրներ, որոնք հաղորդած են այդ լուրի հակառակը, թէ քիւրդեր են յարձակել հայերի վրայ և կոտորել վերջիններից 200 հոգի:

Պուլկարիոյ իշխան Ֆէրիսնանտը սուլթանի հրաւերի համաձայն այցելեց Կ. Պոլիս, ուր մեծ ընդունելութիւն գտաւ: Եւ երկուրդ Կէօշքում, սուլթանի կողմից, խնջոյք տուեց ի պատիւ նրա: Վերջինս համբու-

րել է սուլթանի ձեռքը և շատ գոհ է մնացել իր տուած այցելութիւնից և գտած ընդունելութիւնից: Սուլթանը նւիրել է նրան մի շքեղ ժամացոյց, մի շքեղ թաւաք, զարդարուած թանկագին ակերով, նաեւ մի մատանի: Ֆէրիսնանտը նւիրել է քսան հինգ հազար ֆրանկի մի գումար՝ ի նպաստ պատերազմում վը նասուղ թրքական զինւորների համար բացուած հանգանակութեան:

Մուրադ բէյը, Ժէօն-Թիւրքերի կուսակցութեան այդ գլխաւորը, անցեալ չորեքշաբթի Պարիզից մեկնեցաւ Կ. Պոլիս, սուլթանի յատուկ առաքեալ Ահմէդ ճէլալ-է-տալին փաշային աջողած լինելով նրան համոզել՝ դադարելու սուլթանի դէմ յարձակելուց և խոստացած լինելով մեծարանքներ ու բարձր պաշտօն:

18 Օգոստոսին կէսօրից յետոյ ժամ երեքին Բ. Դրան մեծ Խալաֆուի բաժնում պայթում տեղի ունեցաւ: Մի մարդ սպանեց և մի քանիսն էլ վիրաւորեցան: Պայթման հետ միաժամանակ մի մարդ մի կապոց ձեռքում մտաւ Օսմանեան բանկը: Նրա ձերբակալութիւնից յետոյ խուզարկութիւն կատարելով յայտնեցաւ, որ նա իր մօտ ունէր պայթուցիկներ: Բազմաթիւ ձերբակալութիւններ տեղի ունեցաւ:

Թ Ա Տ Ր Ո Ն

(ԲԱՅՅԻԻ «ՍԱԼԻԻ» ԱՆՏԻՊ ԳՐՈՒԱՅՔԻՑ ՄԻ ԳԼՈՒԽ*)

... Վարագոյրը բարձրանում է. թատրօնական բեմը ձևացնում է մի սքանչելի տեսարան, որ պատկերացնում էր ծերունի Հայաստանը իւր տխուր և տըրտում կերպարանքով: Հեռուն, հսկայի նման կանգնած է Արարատ սարը. նրա չորեքկողմում տեսանելի են քանդված քաղաքների և գեղջոյից աւերակներ, որոնց վրայ տիրում է յաւիտենական խաւարի թագաւորութիւնը: Շինուածութեան ոգին միայնակ թռչում է այդ մահահրաւէր տարածութեան վրայ: Երկար թռչելուց յետոյ նա նստում է աւեր Հայաստանի փլատակների վրայ. նա սկսում է մտածել... նա մտածում է նրա միւս անգամ շինութեան մասին:

Յայտակագիծը ծրագրվում է, նիւթը պատրաստվում է. ոգին կամենում է ձգել հիմքը: Երևան են լինում չորս մանկահասակ հերոսներ: Նոցանից ամեն մինը բերում է մի ահագին քար, դնում է լինելիք շինութեան յատակագծի մօտ, ասելով. «հայ շինութեան անկիւնքարը, զրայ վերայ պիտի դրվի հիմքը»:

Այդ քարերը ունէին զանազան գոյն և զանազան ձևեր: Նոցանից մինի վրայ գրված էր այս խօսքերը. «Աւետարան կամ Կրօնական կեանք»: Միւսի վրայ. — «Գարուններ, կամ Իմացական կեանք»: Երրորդի վրայ. — «Հող, կամ Նիւթական կեանք»: Չորրորդի վրայ. — «Թագ և Գաւազան, կամ քաղաքական կեանք»:

Ոգին կամենում է ձգել հիմքը: Հերոսներից ամեն մինը իւր քարը առաջ է մղում, պահանջելով, թէ նա պիտի լինի գլխաւոր անկիւնքարը: Բարձրանում վեճ և աղմուկ: Նոքա սկսում են միմեանց դէմ հակաճառել: Շինութեան գործը մնում է անշարժ:

*) Այդի Տիկին Աննա Բազիլի խնդրեցով նոյնութեամբ մինք գետնում ենք «Հնչակում» մեր Նշանաւոր վիպագրի սոյն հատւածը, իբրեւ նմուշ նրա մէկ անտիպ աշխատութիւններից: ԺԱՄ. ԽԱՅԱՊԱՐ.

Մինչ դոքա այդ խռովութեան մէջ էին, երեւան են լինում հերոսների մի նոր խումբ սե հագուստներով, երկայն մորուքներով և կատարած ու փրփրած բերաններով: Կոքա գլորելով բերում են մի ահագին անտառ քար, յաւիտենական հնութիւնից սեւացած և բորբոսնած, որի անհարթ մակերեսովի վրայ հազիւ կարգացվում էր բառս. «Խաւար կամ մեռելային կեանք»:

«Կորէք, լակոտներ, գոռացին նոքա դէպ առաջին չորս մանկահասակ հերոսները. յաւիտենից այդ աւերակների հիմքը զրկած է եղել այս սրբազան քարի վրայ, դարձեալ սրա վրայ պիտի հաստատվի նորոգ շինութիւնը»:

Մանկահասակ հերոսները ընդգիմանում են նրանց: Կռիւր և խռովութիւնը սաստկանում է: Հինութեան ոգին յուսահատութեամբ աներկայթանում է:

Կոյն խռովութեան և ազադակի ձայնը հասնում է երկինք, դիք իջնում են ցած. Արարատայ գագաթի վրայ ատենան է կազմում:

Երկայն մորուքաւոր ծերերի բողբոջ հասնում է մինչ տարտարոս անդունդը բաց է լինում. յանկարծ երեւան է լինում իւր ստորերկրեայ խռմբերով, մահու և խաւարի թագաւորը — սարսափելի Պլուտոնը:

Ծերունիքը ուրախութեամբ գիմում են իւրեանց պաշտպանի առաջ և տարածվում են նրա ոտքերի տակ և գետինն են համբուրում:

«Կորէք, անիրաւներ, գոռում է խաւարի թագաւորը դէպ մանկահասակ հերոսները. Դուք լիբբ լակոտներ, մարտնչում էք իմ իշխանութեան դէմ: Եւ ինքս իմ ձեռքով դուքս հանելով տարտարոսի կամարներից երկու քար, ձգեցի աշխարհ. մինը անցաւ Արաբիայում, որի վրայ գրված է այժմ Մեքիտի Սրբարանի հիմքը և միւսը Հայաստան, որի վրայ առաջ գրված էր և այժմ նոյնպէս պիտի գրվի նրա շինութեան հիմքը»:

Մինչ Պլուտոնը բարկացած կամէր իւր երեքարկէնի հարուածով գլորել չորս հերոսները դէպ անդունդը, յանկարծ Հերմէսը վրայ է հասնում: Նա ամորում է Մահու Արքայի բարկութիւնը և հրաւիրում է նրան Արարատ, ուր դիք խորհուրդ ունէին և նրան սպասում էին:

Մի քանի րոպէից յետոյ յայտնվում են Ապոլոնը և Աթենասը: Նոքա կարգում են դից վճիռը, որով սե զգեստաւոր ծերունիքը դատապարտվում են դէպ յաւիտենական կորուստ, իսկ չորս մանկահասակ հերոսներին ասում են. «Դուք չորեքեանքդ միմեանց եղբայր էք, ձեր չորս քարերը պիտի գրվեն չորս անկիւններում և նոցա վրայ պիտի բարձրանայ շինութիւնը»:

Երեւան է լինում դարձեալ շինութեան ոգին: Եւ վարագորը ցած է իջնում: Թատրոնի մէջ հնչվում են ծափահարութիւններ և «Կեցե՛ք յաղթութիւն» — «Կեցե՛ք նոր սերունդ»:

ԲԱՖՖԻ.

ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ԳԱՀԱՎԻԺՈՒՄ

Լոնդոնի «Standard» պաշտօնական թերթի Օգոստոս 5-ի համարում գետնադաժ թղթակցութեան մէջ Կ. Պօլսից կարդում ենք հետեւեալը. —

«Ամենահեղինակաւոր աղբիւրներից տեղեակ եմ, որ Ամէդէ Զէլաւ-Էդդին փաշան, Պարիզում, աջողել է համազել «Ծրիտասարդ թիւրքի» կուսակցութեան պարագլուխներին դադարեցնել

իրանց գործունէութիւնն այն տաճարաւի ընթացքում, որով անցնում է այժմ Թիւրքիան: Նա նոյնպէս աջողել է համազել երեք չորս գլխաւոր աղիտատորներին, որոնց թւում Մուրադ Բէյ, Շէֆիկ Բէյ և Ամէդէ Բէյ, վերադառնալ Կ. Պօլսի, խոստանալով նրանց, որ Սուլթանի գահակալութեան օրն ընդհանուր ներում պէտք է շնորհէ, եւ որ նրանք կըստանան պաշտօններ կառավարութեան մէջ»:

Ետաւայտու եւ անգործ «Ծրիտասարդ թիւրքի» կուսակցութիւնն այդպիսի հարւածներից խուսափել անկարող է: Զուրկ համազում ու հաւատ եղած սկզբունքներից, զուրկ քաղաքական որոշ ծրագրից, զուրկ գործնական գործողութիւններից թիւրքիայում, բռնած Միդհատ փաշայի պոչը կտրած ու սոփեստական աղքատ Սահմանադրութեան փաշայի կտորը, շարունակ հեռից հեռու աղերսական եւ գրպանում պինդ պահած բուլժ գմէլները սպանաւորեցնելով սուլթանին դիմուկներ անելով, համակուած մահմեդական նախապաշարունակներով, որ երբեմն ուրրուն ոճերի մէջ պատառում եւ սուլթանի օրգաններից ոչ լակտա ատելութեամբ յարձակում է հայերի դէմ, — այդ ընթացքով «Ծրիտասարդ թիւրքի» դատապարտւած է անխուսափելի գահավիժման:

Ամէդէ Բիզա Բէյի թերթ «Մէշվէթէթ» ուրրուն ոճով հերքում է եւրօպական թերթերում լոյս տեսած վերոյիշեալ հեռագրի տւրք: Բայց հերքելով, նա շատանում է միայն նրանով, որ սուլթանի խոստումներին, ասում է, հաւատալ չէ կարելի եւ խորհուրդ է տալիս համիտին հրաժարել «կեղծաւոր սակարկութիւնից, որ պատել չէ բերում մի միապետի»: «Մէշվէթէթ», որ իրան թշնամի է յայտարարել «անպատիւ սուլթանի» — այսօր նրա, «միապետի», պատիւի մասին է հոգ տանում: «Մէշվէթէթ», որ ասում է, թէ սուլթանի խոստումներին հաւատալ պէտք չէ, ինքն է նոյնպէս ասողը, թէ «միակ Սուլթանն է, եթէ քարի կամքով ներշնչել, որ կարող է լուծում տալ այդ (Արեւելեան) խնդրին»: «Մէշվէթէթ», որ Ամէդէ Զէլաւ Էդդին փաշայի առաքելութիւնը իւրոխտանքով անաջող է յայտարարում — այսօր իրար հետ միասին ամբողջ աշխարհ գիտէ, որ իր ընկեր եւ «Ծրիտասարդ թիւրքի» ծանալած ընդհանուր պարագլուխ Մուրադ Բէյն իրանց փառեղանի գողումն է տաքանում: «Մէշվէթէթ», որ խորխտանքով սուլթանին խրատ է տալիս կառավարական գանձը չը վատնել Զէլաւ Էդդինների առաքելութիւնների համար եւ «կեղծաւոր սակարկութեան» մէջ չը մոնել, քանի որ այդ «անօգուտ է» — այսօր յարգանքներ ու ներողներ է շուայում իրանց պարագլուխ այն Մուրադ Բէյին, որ գործով ապացուցեց, թէ իր նմաններն ընդունակ են «կեղծաւոր սակարկութեամբ» իրանց խնդը, պատիւը, կուսակցութիւնը ծախելու անպատիւ սուլթանին», որը հեշտ բռնող որսերի համար շատ ծարպիկ լու հմուտ որսորդ է: Եւ չը նայելով իրան, այսօր «Մէշվէթէթ» տեղակէտից Մուրադ Բէյն ի՞նչ է եւ ո՞վ է նա «անտարակուսելի կերպով պատաւոր եւ ուղղամիտ է, իր շերտ յոյսերի մէջ թանկագին հայրենիքը բարձրացնելու փափագով վառւած, իր միամտութեան մէջ իրեն ազնիւ մարդ հաւատացող սուլթանին» — ահա «Մէշվէթէթ» ներքողները, որ հէնց այսօր շուայում է նա այն Մուրադ Բէյի հասցէին, որը տակաւին երէկ «միամտութեան մէջ ազնիւ մարդ» չէր, երեւի, որ պոռոտախօսում էր թէ սուլթանը ոտից ցլուխ կեղծ է, այն Մուրադ Բէյի հասցէին, որ այսօր Կ. Պօլսում չմեծարանքներ վայելող պարագապէս մի մեծ դաւաճան է:

Թէ ի՞նչ բարոյական տրամաբանութիւն ու տեսակէտ է «Մէշվէթէթ» տրամաբանութիւնը, դա անշուշտ ինքը գիտէ, եւ մենք հրաժարում ենք այն հասկանալուց: Մենք գիտենք միայն այն ծշմարտութիւնը, որ ազնիւ, ուղղամիտ, պատաւոր, հայրենասէր մարդն իր հայրենիքին, իր սկզբունքին եւ իր կուսակցութեան դաւաճան լինել չէ կարող, որ այդպիսի դաւաճան ընթացք ունեցող մարդ բարոյական հրէշէ՛րորի համար, ինքն անսկզբունք ու վատ, զահավիժում անխուսափելի է... Բայց գուցէ մեր խելքի բանը չէ հասկանալ պօլսա-թիւրքական բարոյականութիւնը, որի փայլուն ասպետներ շատ կան թիւրքերի, որպէս եւ Բօսֆօրի ջրերում մկրտւած մեր նշանաւոր ու գործիչ՝ հայերի մէջ: Արդէն իրանցից նրանք, որոնք դեռ դաւաճան չեն եղել, պատրաստում են լինելու, անժառանգ լինելով իրանց բարոյականի այդ անխուսափելի գահավիժման... անշուշտ յուսալով արժանանալ նոյնպիսի ներքողների, ինչ եւ Մուրադ Բէյերը:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ լու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush. London W. [Angleterre].

ՏՊԱՐԱՆ

«ՀԵՉԱԿ»-Ի

ԼՕՆԴՕՆ.